





84-93  
Դ-435

Ազգային-Տարածի հրատարակութիւն

№ 67

# ԱՐԺԱՏՆԵՐԻ ՍԻՐԸ



## ԿՕՅԿԱՄՐԸ ԵՒ ԻՐ ՀԵՐԵՒԱՆԵՐԸ

ԴՐԱ 10 ՄՐԱՎ

Հ. Դ. ՄՈՒՐՈՂ Դ. Բ. Բ Յ Ց

Փոխադրեց

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Տպարան «Պրօգրես» Բնկ., Վելիմամին. 7.

1909

	թ.	կ.
1 Ղլըշէ կնանոց պլնը փեշակը 1882 թ. (սպառւառ)	—	20
2 Ուղեցոյց գործն. զինևզործութեան 1885 (սպառ.)	—	60
3 Բուսական աշխարհից մշակւած և անմշակ ծառի կեանքը. տարրական այգեզործութիւն 1886 թ. (սպառւած)	—	—
	—	30
4 Շոշվա Ղալին խէրն ու շառը (Տմբլաչի Խաչանի Ֆելիետոններից) I գիրք 1887 թ.	—	35
5 Փշրանք (մանկական) I գրքոյէ 1888 թ.	—	15
6 Ծխախոտը և իր վասաները 1888 թ.	—	10
7 Ոգելից ըմպելինների վասակարութիւնը 1889 թ.	—	10
8 Ուղեցոյց գործնական շերամապահութեան 1890 թ.	—	40
9 Վիլիամ Չաննիդ (փոխադր.) 1893 թ.	—	40
10 Մեղէա (գրամ 4 գ. փոխադր. Թատր. ամս.) 1898 թ.	—	—
11 Փոքրիկ նւագածու (մանկական թատրոն) Թատրոն ամսագիր) 1898 թ.	—	—
12 Տնզլբազ և Զուռնա Տմբլա II գիրք 1900 թ.	—	40
13 Զուռնա—Տմբլա III գիրք 1901 թ.	—	40
14 Վազի մշակութիւնը գիւղատն. գրադարան № 1 1902 1 —		
15 Զուռնա—Տմբլա ժողովածու Տմբլաչի Խաչանի Փե- լիետոնների բառարանով երկու գիրք 1907 թ. 1 — 25		
16 Փնջիկ (Մանկական ոտանաւորներ 1907 թ.)	—	15
17 Լուսատիտիկներ, մանկական, փոխադր. 1907 թ.	—	40
18 Շերամապահութիւն գիւղ. գրադ. № 3. 1908 թ.	—	5
19 Տեղեկագիր Ս. էջմիածնի գիւղատնտեսակ. բաժնի — 10		
20 Ռուսահայերի գիւղատնտեսական վիճակը և գիւղա- տնտեսական դպրոցների կարիքը 1908 թ.	—	10
21 Գինեգործութիւն ընդարձ. գիւղ. գրադ. № 2 1908 թ.	—	80
22 Աղքատների սիրտը —	—	—
	—	10

# ԱՐԺԱՏՆԵՐԻ ՍԻՐԸԸ

84  
4-35

այս



115

## ԿՕԾԿԱՆՔԸ ԵՒ ԻՐ ՀԵՐԵՒՆՆԵՐԸ

002  
000  
000

Ի. Դ. Մ Ո Լ Դ Ի Ռ Ի Ց

Փոխագրեց



Թ Ի Ձ Լ Ի Ս

Տպարան «Պրօգրես» Բնկ., Վելիմին. 7.

1909

102 MAR 2013

5583



ԿՈՍՏԱՆԴԻՔ ՄԵԼիք-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ



Մարիզի մի ծայրում, շատ ժամանակ չէ, որ գոյութիւն ունէր բանորոների մի փոքրիկ գիւղ։ Այդ տեղը կարծես թէ քաղաքը արւարձանի համար գաշտի հողերից երկու օրավար տեղ ուժով ձեռք էր բերել։ Գիւղ ձգելու պատճառ եղել են բանջարանոց պահողների հին տնակները, որ յետոյ նրանց մէջ եղած բաց տարածութիւնը հետզհետէ լցւել է աղքատիկ խըրածիթներով։ Այդ խրճիթների պատուհանները բազմատեսակ էին, կային մեծեր ու փոքրեր, նայելով թէ ատաղձագործների փայտաաներում ինչ շրջանակներ են գտնւեր, իսկ կտուրների ծածկը թափառաշրջիկ երեխանների վարտիկի էին նմանում, — այնքան նրանց վրայ տեսակ տեսակ կարկատաններ կային։

Այդ ձեռաց շինւած տնակների գոներն անդամ անցորդի զարմանքն էին շարժում։ Այդտեղ կարելի էր տեսնել թէ շտեմարանների ու ցախատների, թէ շքեղ տների և թէ խանութների գոներ։ Երկու հարեւանների — կօշկակարի և որմնագրի խրճիթների գըռները կուղովիկոս ԽՎI-ի ճարտարապետական տարազով շինւած միևնույն գուան երկու փեղերն էին։

Դրանք մի ժամանակ զարդարւած են եղել փայտի վրայ գեղեցիկ քանդակով և գեռ կարելի էր որոշել նրանց վրայ ծաղկի ճիւղերը, տերեններ ու մի զոյգ

աղաւնիներ, բայց այդ աղաւնիների պլուխները վա-  
ղուց կոտրւել կորել էին:

Հին ժամանակներում այդ քանդակւած դուռը  
ոսկեկար շորերով հպարտ դռնապանի մի ձեռքի շարժ-  
մամբ բոլորովին բացւում էր և փառահեղ զուգւած  
մարկիզները դիմաւորում էին ու շուրջով ծունկ խո-  
նարհում շէմքից գուրս եկող արքայազն տիկնոջ: Բայց  
այդ շատ վաղ էր: Այժմ ամեն մի փեղկը իր առան-  
ձին խաղաղ կեանքն ունէր:

Մի անակում ապրում էր կօշկակար Ռուսէլի աղ-  
քատ ընտանիքը, և նրա գուան ծխզնին եկող-գնացողների  
քչութիւնից՝ այնպէս էր ժանդոտել, որ բաց ու խուփ  
անելուց՝ սասափիկ ճռնչում էր: Ծերունի Ռուսէլը ապրում  
էր միայնակ իր կնոջ հետ և ամբողջ օրը եռանդով  
կօշիկներ էր կարում: Երկուսն էլ շատ քիչ էին տա-  
նից գուրս գալիս, նշանակում է և քիչ անգամ վե-  
րադառնում: Շատ սակաւ էր պատահում, որ դուռը  
բանային և երբ որևէ պատճառաւ նա բացւում էր,  
կայարանի ճեղքից հին կօշկեղէնի ու հին կաշւի մի  
թթու հոտով խեղզուկ օդ էր փուռում փողոցը:

Այդ ճեղքից կարելի էր տեսնել փոքրիկ չուզու-  
նի փառարանը, որ փառում էին հին, փտած կրունկ-  
ներով և թւում էր, որ կատաղի կրակը լափում, փչաց-  
նում էր այդ ամեն հնամաշ իրերը և նոյն միջոցին փա-  
ռարանի վրայ դրած կաթսայում խլխլթում, եփում  
էր սոխապուրը:

Այդ շքեղ գուան երկրորդ փեղկը ուրիշ վիճակ  
ունէր: Նա անգաղար բացւում էր և նա ոչ հանգըս-  
տանալու ժամանակ ունէր և ոչ էլ իր ծխզնու վրայ  
ժամանդոտելու: Դրանից էլ նրա ծխզները այնպէս էին  
մաշւել, որ հազիւ էին պահում դուռը: Դուռը բաց

ժամանակը կարելի էր տեսնել նեղ խցիկը, ուր որմ-  
նազրի երեխաները վխտում էին: Նրանք վեց հոգի  
էին մէմէկուց փոքր: Նրանց աղմուկը, երգն ու աղա-  
զակը լցնում էր բնակարանը և երբեմն այդ զոռիւն-  
գոչիւնին խառնում էր և պատուհանից սպրզած քա-  
մու սուլոցը: Բայց երեխայքը չէին վհատում, եր-  
գեր էին երգում:

Երեխայքը զոռզոռում էին մանաւանդ առաւօտ-  
ները, երբ մեծ աղջիկը՝ Մարին անկողնից շատ վաղ  
դուրս էր պլծնում ու թեթև արտուտի պէս ըունը  
վերադառնում, փոքրիկների համար նոր թխած հաց  
ըերում: Մայրը դանակով հացի երեսին խաչ էր քա-  
շում, յետոյ կտրատում և միթէ մօր այդ օրհնելուց չէր,  
որ հացը երեխաներին այնպէս համեղ էր թւում:

Խեղճ երեխայք: Նրանց ախորժակը միշտ լաւ էր  
և կասես նրանց ատամների տակ մինչև անգամ փոք-  
րիկ քարերը ընկուզի պէս կը փշրւեն: Նրանց աչքե-  
րից, նրանց քոքոցից կարելի էր գուշակել որ նրանք  
կուտեն, կը խժուեն ամենը մինչև վերջին փշրանքը,  
ինչ որ նրանց մայրը ձեռք կը բերէ, շատ անգամ  
իրեն զրկանքի ենթարկելով:

Եւ այսպէս այս ընտանիքը օրէ օր ապրում էր  
և ոչ մէկին վիզ ծռում: Ասենք թէ մէկին վիզ ծռե-  
լու էլ տեղիք չըկար՝ ոչոք նրանց բան չէր տալիս:  
Հայրը առաւօտից մինչև գիշերը աշխատում էր, բայց  
աշխատութիւնը չէր, որ նրան վախեցնում էր, ոչ: Նա  
պատրաստ էր տասնեակ ու հարիւրաւոր աներ շինել  
ներքատնից մինչև տանիքը և, եթէ հարկ լինէր, մինչև  
անգամ Բաբելոնի աշտարակը կանգնեցնել, հաւատա-  
ցէք նա այդ չէր մերժիլ:

Բայց ինչ կարող ես անել, երբ ցրտերը վրայ կը

համեն, երբ գործերը կը դադարեն... Ի՞նչպէս չըմբածել սրա մասին։ Տունը երեխաներով լիքը, իսկ խնայողական գանձարանում մի սու<sup>\*)</sup> էլ չըկայ։

—Ի՞նչ ձար կը լինի զրանց, յաճախ ասում էր հայրը, նայելով որդոց վրայ։ Մկների պէս են ուտում։

Որմնագիր Լանդրին շատ անզամ էր փորձել սև օրւայ համար մի բան յետ ձգել բայց տանտիկինը փող էր պահանջում ամենակարևոր բաների համար և պէտք էր ձեռք քաշել փողից ու քսակը նրա բռան մէջ թափ տալ։ Բայց ինչքան լաւ կը լինէր թէ հօր և թէ մօր համար, եթէ կարողանային օրէցօր անվըրդով ապրել, զիտենալով, որ սև օրւայ համար զրամ կայ։

Իսկ առանց զրանց նրանց կեանքը երբեմն դառնում էր։



Մի սառնամանիք առաւօտ էր։ Արևը իր ոսկեզօծ ճառագայթներով թափանցել էր պատուհանից և լուսաւորել վառարանի ցուրտ մոխրն ու խրճի դատարկ դարիքները։ Երեխաները ծիծաղում էին, թռչկոտում, ժպտում իրենց մօրը, արեգակին, սառնամանիք պայծառ օրւան, իսկ մօր սիրտը մորմոքւում էր մտածելու, թէ ինչպէս կերակը, ինչպէս այդ փոքրիկներին տաքացնէ։

Առաւօտը քնից վեր կենալուց երեխաների ուրախութեան չափ չըկար։ Երեխաները շպրտեցին նին շո-

<sup>\*)</sup> 20 սուն մի ֆրանկ է, մի ֆրանկը մօտ 40 կոպ։

րերը, որ գիշերը առել էին իրենց վրայ ու սկսան հագնել կօշիկները։

Մի սաղ կօշիկ չըկար։ Բոլորը, բոլորը ծակոտւել էին։ Հէնց որ մէկը ոտը կոփում էր, կարմիր մատը կօշիկ քթից լեզու պէս դուրս էր պրծնում։ Եւ երեխայքը ծիծաղում էին, իրենց ոտներով զւարձանալով։

Զէ որ ուրիշ խաղալիք չեղած տեղը որէտք էր մի բանով խաղալ, իսկ ամեն բանի կարելի է վարժւել։ Զէ որ կանաչ ճների վրայ ձվլող թռչնակները այդ աղքատ երեխաներին չէին ծաղրումնրանց ձընթռոտած վարտիկների համար և միթէ պոչոտ, գզզըզւած շունը նրանց չէր փաթաթւում ու իր լւաներից բաժին հանում։

Բայց դառնանք երեխաներին։

Հազիւ թէ նրանք վերջացրին հազնեելը, սկսեցին ճւճւալ։ «մայրիկ, հաց»։ Դատարկ ստամոքսները աւելի բարձրածայն են ուտելիք պահանջում։

Հայրը լուսաբացին վեր էր կացել։

Գիշերը սաստիկ քամի էր, և որմնագիրը ինքնիրեն մտածում էր, միթէ գործ չի գտնւիլ։ Միթէ մի տեղ մի ծխնելոյզ չի լինիլ փլած...։ Պարփզը մեծ քաղաք է, —բարձրածայն ասաց նա ուսին ձղելով քաթանէ քսակը և միւս ձեռով հաւաքելով իր գործիքները —քլունգն ու թիակը, անկիւնացոյցն ու լարից կապած շողուլը։

Կինը նրան տիրութեամբ նկատեց։ «Բայց որմնազիրներ էլ շատ կան»։

Լանդրին զլուխը թափահարեց ու դուրս եկաւ աշխուժով տանից, ուշ չըդարձնելով ցրտին, որ իսկոյն նրա մարմնին սարսուռ բերաւ։ —չէ որ նա քաթանէ բլուզով էր դուրս եկել։

Տանտէրը նրան տեսնելով, հեռւից կանչեց.

— Եյ, Լանդրի, շուտ արի, բարեկամս, այսուղձեք, աշխատանք է պէտք: Ի՞նչ գիշեր էր: Տեսար: Քամին պատը շուտ է տւեր, զբողը տանի: Ուրիշներինը չըգիտեմ, բայց մենք մինչև Ծնունդը գործ ունենք:

Լանդրին ծիծաղեց և սրտումը գոհ եղաւ փոթորկալից գիշերից:



Իսկ խեղճ Մարին դառն արաստուք էր թափում: Դեռ կախօրեկին, երբ գնացել էր հացավաճառին, նա կոպտութեամբ տսել էր.

— Տես, այս վերջին անգամն է, որ պարտք եմ տալիս: Այսպէս էլ տաս մօրդ:

Ամսից աւելի էր, որ հացավաճառը համբերում էր և առանց փողի հաց տալիս:

Բայց ամեն օր Լանդրու հաշիւը երկարանում էր, և ամեն օր խանութպանի գէմքը աւելի մոալում:

Այսպէս այդ օրը Մարին դատարկ ձեռով տուն վերադառւ. Նրա փոքրիկ սիրու սաստիկ վիրաւորւած էր. հացավաճառը ուրիշների տուաջ նրան անպատւել էր:

— Անպատւեց ինձ, ինչպէս մի մուրացկանի, հեծկլում էր աղջիկը—և ես... ես փախայ:

Մայրը մտածեց. «Ռւմից պարտք խնդրեմ»... Զէ որ շուրջը նոյն աղքատութիւնն է տիրում: Մի քանի անձինքներից արգէն մի քանի ֆրանկ պարտք էր վեր տսել: «Արդեօք չըգնամ կոմսունու մօտ»:

Կոմսունու այզին հեռու չէր: Երեխաները ամառը վազվում էին այստեղ, մօտենում ցանկապատին,

ձեռները երկաթի լարերի արանքներից մեկնելով՝ պնդուկով ու հացով կերակրում կապիկին ու վայրի այծին:

Որմնագրի կինը աղլուխը ուսերին ձգեց ու շտապով դուրս եկաւ խցիկից:

Սրտատրոփ նա քաշեց այգու դռնակի զանգը: Կոմսունու շունը բարձր հաչոցով վազեց հիւրին դիմաւորելու. նա չէր սիրում վատ հագնւած մարդոց:

Շան հաչոցի վրայ դուրս եկաւ պառաւ անսեռունունին:

— Ի՞նչ ես չարացնում Մեդորին, փնթփնթաց պառաւը:

— Արդեօք չէ կարելի կոմսունուն տեսնել, քաշւելով ասաց տիկին Լանդրին:

— Կոմսունին դեռ քնած է:

— Երբ զարթին, բարի եղէք, տիկին, իմ մասին յայտնեցէք: Կոմսունին ինձ ճանաչում է, իմ երեխաներին էլ է ճանաչում:

— Եթէ կրցանկանաք սպասել, նստեցէք այստեղ, պատշպամքի սանդուղքին, ասաց անտեսունին մեղմացած:

Կինը նստեց. Մեդորը նրա շուրջը պատելով չարացած մոմում էր ու ատամները զրճացնում:

«Հապա, որ ինձ կծի, — մտածեց խեղճը, — չէ որ գանգատւելին էլ վախ է»:

Վերջապէս նրան կանչեցին սրահը. դուրս եկաւ պառաւ կոմսունին. նա տեսքով քաղցր ու բարի էր:

— Ի՞նչ է պատահել, սիրելիս, թւում է, որ դուք լաց էք լինում:

— Ո՞հ, տիկին, ներեցէք ինձ: Գիտէք, երբ ամուսինս գործ չէ ունենում, երեխաներիս վիճակը վա-

տանում է: Հաւ ամուսին ունեմ, բերանը գինի չէ զնում, ինչ որ ստանում է մինչև վերջին սուն էլ ինձ է տալիս: Բայց ժամանակը վատ է, զործ շրկայ, աշխատանք շրկայ: Ի՞նչ անել: Երեխաները լաց են լինում, և ես յիշեցի ձեզ, տիկին. խղճացէք նրանց, դուք այնպէս սիրում էք երեխաներին:

—Խեղձ կին,—ասաց պառաւ կոմսուհին ու շուռ եկաւ դէպի տնտեսուհին: —Մալվինա, զնա բեր վերի դարեքի վրայ դրւած երեք պուլիկ քաղցրաւէնիքը:

Մալվինան զնաց քաղցրաւէնիքի ետեից, իսկ կոմսուհին ետեից ասաց.

—Այս ծառայողները անտանելի են: Երեկ քիչ էք մնացել զէն էք ածում այդ քաղցրաւէնին, որովհետեւ մի քիչթթւելէ: Զեզ կը հարկաւորէի, հոգեակս: Երեխաները քաղցրաւէնիք շատ են սիրում: Մի ուրիշ տեղ էլ ձեզ հաց կը տան, մի երրորդն էլ զործ կը գտնէ: Լաց մի լինիք, սիրելիս, հանգստացէք: Երբէք շրպէտք է յուսահաւելք Մնացէք բարեաւ. ձեր ամուսնուն յաջողութիւն եմ ցանկանում:

Եւ կոմսուհին հեռացաւ իր սենեակները:



Այդ միջոցին Մարին արդէն արտասուքը սրբած պարապում էք տան սովորական զործերով: Հարեանները դէպի Ռուսսէլը և նրա կինը վատ էին տրամադրւած: Նրանց ժլատ, մարդատեաց էին համարում: Զըգիտէին նրանց մասին թէ ինչպէս են ապրում. նըրանք բարեկամ չունէին:

Միայն օրւայ մէջ երկու անգամ էք կօշկակարի և նրա կնոջ երեխին ժպիտ փայլում: Նրանք ժպտում

էին, երբ նրանց մութ, հին կաշիների հոտով լցւած խցիկն էք մտնում դաշտի ծաղկի պէս թարմ Մարի Լանդրին և իր սրահնչիւն ձայնով ասում:

—Բարի ձեզ, հարեան... Որևէ յանձնարարութիւն չունիք, ափկին Ռուսսէլ:

—Հազար բարե, աղջիկս, պատասխանում էք ծերունին, բարձրացնելով գլուխը, որ միշտ կոացած էք լինում կօշկի կազապարի վրայ:

Մի բոտէ նրա սեացած ձեռները բաց էին թողնում զործը, և ծերունու դէմքը, որ հին ժամանուած կողպէքէ էք նմանում, կասես թէ բացում էք: Նրա աշքերը փալփում էին, նաև ժպտում էք և ցոյց տալիս իր հաւասար ու ամուր ատամները, որ կասես երիտասարդի լինէին: Նրա կինը, որ մի ոտով կաղ էք, մօտենում էք դարեքին և այնտեղից վերցնում դրափինը ու յանձնում Մարիին:

Տես, շրկոտրես, ասում էք նա և աւելացնում: Վեց սուի օղի կառնես սրա համար և երեք սուի աղած սուրճ ինձ համար: Միտդ կը պահէս: Բայց շրմուանաս խանութպանից սառը շաքար էլ վերցնել:

Միթէ կարելի էք սառը շաքարը մոռանալ... Այդ ժամանակներում սովորութիւն կար, որ օղի գնողներին ձրի չորս հատ սառը շաքար էին տալիս, որոնցով խմիչքի սիրահարները սպիրտից դադւած իրենց կոկորդները մեղմացնում էին: Կօշկակարը այդ միջոցը զործ չէր զնում, և սառը շաքարը մնում էք երեխաններին:

Կօշկակարը և իր կինը մի անգամ էլ ժպտում էին, երբ որ Մարին զնած բաները ձեռքին վերադառնում էք: Եւ այդ ժպիտը աւելի ևս ուրախ էք,

որովհետև դրանով թէ այդ սիրելի աղջկան էին ողջունում և թէ նրա բերած իրերին:



Այդ սառնամանիք տխուր օրը ըստ սովորութեան Մարին մտաւ տիկին Բուսսէլի մօս: Նա տխուր էր, և կօշկակարի կինը նկատեց նրա լացոտ աչքերը. նա ուզեց աղջկան հարցնել պատճառը, բայց վախենալով, որ նրան կը վշտացնէ, լոեց:

Երբ որ Մարին գնաց, կինը ասաց ամուսնուն.

—Մի սպասիր, որ Ծննդեան տօնը գայ, որ յետոյ ցոյց տաս նրան տալիք ընծաղ: Մի նայիր նրա կօշիներին. չըլինի՞ թէ դրա համար է լաց եղել:

—Ես էլ նոյնպէս նկատեցի, պատասխանեց կօշկակարը. մեր աղջիկը ինչ որ սպրդնել էր ու տիրել:

—Այս, կարծեմ պատի ետևից փոքրիկների լացի ձայն էլ է գալիս, աւելացրեց կինը: Տեսնես ի՞նչ է պատահել:

Նա քաշքաշ դալով մօտեցաւ դուանը, բաց արեց ու խկոյն փակեց: Նա տեսաւ ինչպէս կօշկակարի կինը քաղցրաւէնիքի պուլիկներով առւն եկաւ. չուզեց, որ իրեն համար ասեն, թէ սիրումէ ուրիշներին ծածուկ դիտել:

Մարին վերադարձաւ և սեղանի վրայ դրեց թէ գնւած բաները և թէ փողի մնացորդը:

—Տասնեմէկ և ինն—կը լինի քսան, ասաց նա ու շուռ եկաւ որ գնայ:

Այդ ըոպէին կօշկակարը տեղից վեր կացաւ, դարեքից մի զոյդ նոր կօշիկներ վերցրեց և աղջկան դէպ ինքը դրաւեց:

—Նայիր, տես, ինչ լաւ կօշիկներ են, ասաց նա խորամանի ժպիտով:

—Ինչպէս սիրուն են, նկատեց Մարին:

—Թէ իմանաս ում համար է քեռի Ռուսսէլը պատրաստել, որի համար այնպէս աշխատել:

—Երկի մի օրիորդի համար, ասաց Մարին:

—Այս չիմացար, կանչեց կօշկակարը:

Մարին մատով կօշկի ճերմակ կրունկին դիպաւ ու ասաց. «Ի՞նչպէս ողնորկ կրունկ է և ինչպէս մաքուր... Ես այդպիսի կօշիկ իմ օրում գեռ չեմ ունեցել»:

Կօշկակարի կինը ուրախութիւնից փայլեց, իսկ կօշկակարը լրջօրէն շարունակեց. «Գիտես, որ մի շարաթից Ծնունդ է և այս կօշիկները կարող ես հագնել. քեռի Ռուսսէլը իր աղջիկ Մարիի համար է պատրաստել»:

—Ճնորհակալ եմ, շնորհակալ, սիրելի քեռի Ռուսսէլ. Նա գրկեց ու համբուրեց ծերունուն և յետոյ յանկարծ քարացած՝ լոեց...

—Ի՞նչ է պատահել, որդեակա, քո աչքերում արտասուրք:

—Մենք մինչև Ծնունդը չենք ապրիլ: Մենք քաղցից կը մեռնենք: Հացավաճառը չէ ուզում այլիս մեզ պարտք տալ...

—Ի՞նչ ես ասում, ասաց կօշկակարը և նայեց կնոջ վրայ:

—Ի՞նչ է ասում... զու լսում ես...

Նա հանեց սեղանի արկղից հացի մի կտոր ու տւեց Մարիին. «Ահա մեղանից վեցրու, խեղճ աղջիկս»: Քիչ յետոյ աւելացրեց. «Մեզ համար յետոյ կը բերես խանութից»:

—Այս էլ վեր առ, ասաց նրա կի՞նը աղջկայ ձեռը  
ճխտելով իր բերած մանր փողը:

—Եւ շուտով տուն վագիր, ուրախ բացականչեց  
կօշկակարը:

Բայց Մարին առանց այդ պատւէրին էլ թիթեռ-  
նիկից արագ տուն թռաւ:



Տունը հեռու չէր, մի պատ էր բաժանում, միայն  
պէտք էր քանդակւած շքեղ միւս փեղկը բանային:  
Տանը երեխաներին կոմսուհուց բերւած քաղցրաւէ-  
նիքն էր բաժանում:

—Շատ համեղն է, ասաց Ժանը բերանը բացած:

—Թթու է, ասաց փոքրիկ Փիփինան:

—Կծու է, նկատեց Օգիւսոր, թեքով բերանը  
սրբելով:

—Սպասեցէք մինչև հաց կը բերեմ, հացով հա-  
մով կը լինի, միտթարում էր նրանց մայրը ինքն էլ  
իր ասածին չը հաւատալով:

Այդ բոպէին շէմքում երկաց Մարին:

—Հաց, հաց, կանչեցին երեխաները և սկսան  
այդ նեղ խցիկում պար զալ:

—Ո՞րտեզից ճարեցիր, հարցրեց մայրը տարա-  
կուսած:

Մարին նրա ծնկան դրեց մանր փողերը և կարմ-  
րատակած, վառ աշքերով սկսեց պատմել քեսի ու  
քեռակին Ռուսէլի մասին... Այս, հաց էլ տւին, փող  
էլ, կօշիկ էլ:

—Եւ կան մարդիկ, որ դեռ ասում են մեր հա-  
րեանները ժլատ են, այս, ես էլ նոյն կարծիքի էի,

ասաց մայրը մաքով փոխադրւելով կօշկակարի կա-  
ցարանը, պատի միւս կողմը:

—Ո՞չ, նրանք բարի են, վճռական կերպով ասաց  
Մարին: Մայրիկ դու այդ բամբասասէր կանանց խօս-  
քին մի հաւատար:

Իսկ փոքրիկ ժանը հացի կեղեր արդէն կտրել,  
առանց նրանց խօսակցութեանը խանուելու, ծամում  
էր երկու թշերը տողցրած:



Երեկոյեան որմնադիր Լանգրին շւշւացնելով մօ-  
տենում էր իր բնակարանին: Կինը առաջին հայեց-  
քից հասկացաւ, որ օրը յաջողակ է անցել:

Նա խուցը մտաւ կրաթաթախ, բայց նրա երե-  
սին ծածկւած փոշու տակից երկում էին նրա ինք-  
նակոն ժպիտն ու ուրախ աչքերը:

—Բանիդ կաց, քամին էլ օգնեց. մենք էլ պա-  
րապ չէինք, ասաց նա: Իսկ այստեղ տեսնում եմ, որ  
Դուք էլ քէֆի վրայ էք:

Նա զարմացած նայեց վասարանին, որտեղ լորին  
եփում էր ու սենեակը մի հաճելի հոտով լցնում:  
Վասարանում կրակը ուրախ պլազում էր ու փայտերը  
շրթչրթում: Մայրը հացը կտրատելով՝ մին միւսի  
ետեկից ձգում էր ապուրի մէջ:

Մարին հօր ծնկան նստած՝ պատմեց նրան օրւայ  
բոլոր անցքը. նա հիացմամբ խօսեց քեսի ու քեռա-  
կին Ռուսսէլի մասին:

Ապուրը շուտով պատրաստեց ու ամենքն ուրախ  
ուրախ ու բաւական՝ ճաշի նստեցին:

—Կարծեմ մայրիկը մոռացել է կերակրի մէջ

իւղ ձգել կատակով ասաց որմնադիրը: Գուցէ այսօր պաս է, դրա համար:

— Լաւ է, լոխիր, ասաց կինը: Ուրախացիր, որ այս էլ գտնւում է. բարի մարդիկ օգնեցին:

Ծննդեանը մի շաբաթ էր մնացել, բայց օրերը այնպէս շուտ էին անցնում, որ չիմոցան էլ թէ տօնը ինչպէս վրայ հասաւ:

Առաւօտեան երկաթուղուց մի սուրհանդակ գալով երեաց թաղի փողոցում մի զամբիւղ շալակին:

— Աղէլ կանդրի, որտեղ է կենում Աղէլ կանդրին, հարցնում էր նա:

Հետաքրքիր գլուխներ երեացին պատուհաններում, ոմանք էլ դարբասից դուրս եկան: Մի ճերմակ մազկալով կին էլ դուրս թուաւ փողոցը:

— Ահա այնտեղ է կենում: Տեսնում ես: Վերջին տունը, որտեղ դաշտն է սկսում:

Նրա թաւամազ շունը այդ միջոցին եռանդով հոտ էր քաշում սուրհանդակի զամբիւղից:

— Այդ ի՞նչ ես տանում, սիրելի պարոն, շարունակեց սանամայրը:

Սուրհանդակը ամօթահար շուռ եկաւ ու փընթփընթաց.

— Ի՞նչ եմ տանում: Սակ եմ տանում... թող, թող, որ անց կենամ...

Անց կենալը շատ էլ հեշտ չէր: Սաստիկ անձրեները ճանապարհը մի անանցանելի ճահիճ էին շիներ: Սուրհանդակը մի կոշտից միւս կոշտի վրայ ցատկելով, վերջապէս հասաւ որմնադիրի կացարանին:

Քանդակւած դուռը երեք չէր փակւում, ուստի սուրհանդակը երկնքից իջածի պէս անսպասելի կերպով խուցը մտաւ:

Ամենքը զարմացած նրան նայեցին:  
— Այդ գոնք էք Աղէլ կանդրին. ստորագրեցէք այստեղ ստացման մասին:

— Պարոն, դուք սխալւած էք, զամբիւղը երկի մեզ համար չէ:

— Մանսից ձեր անունով է ուղարկւած:

— Մանսից: Ճիշտ է, ես այստեղ եմ ծնւել, բայց ազգականներիցս ոչոք այնտեղ չէ մնացել:

— Միայն ինձ ասացէք, ձեր անուն-ազգանունը Աղէլ կանդրի չէ:

— Այն:

— Շատ բարի: Գրեցէք շուտով և յիսուն սանտիմ վճարեցէք բերելու համար:

Տիկին կանդրին հանում է փողը և ստորագրում:

— Մի բան էլ թէլի համար, ասում է սուրհանդակը:

Նրան մանր փող են տալիս և սուրհանդակը անյայսանում է նոյն արագութեամբ, ինչպէս երեացել էր: Դեռ խեղճերի ուշքը գլուխը չէր հաւաքւել, երբ մէկը դուռը թրխթրխկացրեց, և շէմքում երեաց նամակաբերը: Նա ձեռքը կոփեց պարկը և մի նամակ հանեց:

— Տիկին կանդրի, ասաց նա անմեղ ժպիտով: Պէտք է ասեմ, որ դուք շատ քիչ էք նամակ ստանում:

Նամակաբերը գնաց. երեխանները շրջապատեցին մօրը և հետաքրքրութեամբ նայում էին թէ ինչպէս բացեց ծրարը, հանեց մի պոստի թերթ վարդի ու անմոռացուկի ծաղկանկարներով:

— Ծնորհաւորական նամակ է, բացականչեց Մարին. այդպիսի զարգարուն թերթեր նա տեսել էր դպրոցում հարուսա աղջկանց մօտ:

Մայրը ցոյց տւեց երեխաներին գեղեցիկ պատկերը և երբ ամենքը տեսան ու կշտացան, բարձր ձայնով կարդաց նամակը:

«Իմ սիրելի դայեակ»:

—Ահ, այս գրողը նանին է, քո կաթընկերը, բացականչեց մայրը դառնալով Մարուն։ Այս, այդպէս է, նրանից է. իսկ ես բոլոր ժամանակ մտածում էի ու գուշակում արդեօք կենդանին է իմ սիրուն նանին թէ ոչ։ Նա երկու տարեկան էր, երբ ես նրանից հեռացայ, նա քանի տարեկան է։ Ինն, ինչպէս գոււ։ Ախ, իմ սիրելիս, և ինչպէս գրում է, նայիր։ Ինչպէս մի չափահան օրիորդ, Քեզանից շատ լաւ է գրում։

—Այդպէս կոկ թղթի վրայ երեխ լաւ է գրում, ասաց Մարին։ Ի հարկէ լաւ էլ աշխատած կըլինի։

Մայրը սկսաւ յուզւած ձայնով կարդալ.

«Իմ սիրելի դայեակ,

«Ձեր փեսայ ելւա կանդրին մեր կողմերը գալով մտաւ մեզ մօտ։ Նա ասաց, որ ես մեծացել եմ և հաղորդեց, որ գուք ողջ և առողջ էք, միայն գուք շատ երեխաներ ունէք, իսկ փող քի։ Իմ ծնողները շատ արտմեցին։ Հայրիկս այժմ հարստացել է. նա աշակերտներ է պահում և մինչև անգամ քաղաքագլուխ համար նա է շոր կարում։ Մայրիկս ձեզ համար մի սագ է ուղարկում տօների պատճառով, բայց սագը հասարակ սագ չէ, այլ գաղտնիք ունի։ Բացէք կտուցը և մի թղթի մէջ փաթաթած քսան ֆրակնոց կըգտնէք։ Մայրիկս ձեզ չէ վճարել վերջին ամիսը, երբ գուք մեզ մօտ էք եղել. մենք այն ժամանակ աղքատ էինք։ Մայրիկս վաղուց ուղարկած կըլինէր այդ փոլը, բայց ձեր հասցէն չըգիտէր։ Մայրս ամեն Ծննդեան տօնի

ձեզ համար մի սագ կուղարկէ իր գաղտնիքով։ Ծնորհակալ եմ ձեզանից, սիրելի դայեակս. դուք ինձ ծիծէք տւել, պահել, մեծացրել. այժմ ես առողջ աղջիկ եմ և յիսուն ֆունտ եմ քաշում։

«Համբուրում ու գրկում եմ ձեզ։

Աննա Բուրդիլիոն։

Տիկին Լանդրին համբուրեց նամակը և, ինչպէս մի թանգագին բան, թերթը գրեց դարեքի վրայ այնպէս, որ հեռուից նրա ծաղկանկարը երևայ։

Ուրախ ծիծաղով սկսեցին զամբիւղը բաց անել և երեխաներն անհամբեր կոխում էին ներս իրենց մատները։

—Այնտեղ փետուրներ կան, բացականչեց Ժանը։

—Իսկ ես կտուցը շարժեցի. նա ուզում էր ինձ կծել, յայտնեց Փիփինան։

Մայրը գանակով կտրեց թոկը, բացեց ծածկը և ամենքը տեսան սազը։ Մարին թուչունի կտուցը շուտով բացեց ու մի թղթի փաթեթ հանեց։

—Ահա «գաղտնիքը»։

Ոսկի գրաֆը շողջողում է մօր ձեռքին, և ամենքին թւում է թէ սենեակը լուսի և ուրախութեան ճառագայթներով լցւեցաւ։

Ծնունդ, Ծնունդ, Ծնունդ։

Քանի խաղաղ օրեր, երեխաների համար որքան հաց կարելի է այդ փողով առնել, մտածում էր մայրը և ուրախ էր, որ ամեն մի ժամւայ դառն հոգսից մի քիչ կըհանգստանայ…

—Մայրիկ, ինչքան շաքարեղին կարելի է այդ փողով գնել, յայտնում է ժանը։

—Եւ քանի քանի տիկնիկներ, ծւծւում է Փիփինան։

— Հարիւր տիկնիկ, յայտնում է Օգիւսար: — Իսկ շաքար ամբողջ տարւայ, մտախոհ նկատում է Մարին:

Ծնունդ, Ծնունդ, Ծնունդ:

Մայրը կռանում է յատակին և ոսկի զրամը պատցը-նում. ոսկի բղանը բուլղի է կտրում, թոչկոտում խցիկի աղիւսի յատակի վրայ և գեռ աւելի ևս փայլում, շողջողում իր կատաղի պարի ժամանակ:

Եւ մայրը, և երեխաները գւարձանում, ինդում են:

Ժամացոյցի խզած ձայնի վրայ բարձրացնում են նրանք գլուխները. Խնչու այսպէս յանկարծ մթնեց. Զէ որ կէսօրւայ ժամը խփեց. Ամենքը նայում են պատուհանից:

Ի՞նչ ուրախութիւն,—ձիւն է եկել:

Չիւն, ձիւն, ձիւն:

Ի՞նչ սիրուն տօն:

Երեխայրը թողնում են ոսկի զրամով խաղալը և խմբովին վազում փողոցը. Ձիւնի ճերմակ քուլաները թեթև թիթեռնիկների պէս թոչկոտում են, վերմից թափում, պսպղում, պտոյտ գալիս, ծածկում ու ցեխոտ ճանապարհը, աղքատիկ խրճիթները, չափարները, ծառերի ճղները. Ամեն բան ծածկում է կարապի թեթև բմբուլով:

Իսկ մարդկանց սրտերում արձագանք է տալիս երգի ուրախ վերջաւորութիւնը:

«Տօներ են, տօներ են, տօներ են»...

Սպիտակ ձիւնը թարմութիւն ու առոյզութիւն է ներշնչում: Խնչքան լաւ է աշխատութիւնից յետոյ հանգստանալը: Խնչքան ուրախալի է նստել տանը, ինչքան հաճելի է մարդ իր շէմքումը կանգնի ու հիանայ ձիւնով, այն թեթև ճերմակ ձիւնով, որ թափ-

ւում է ու օդի մէջ թռչկոտում, պտոյտ-պտոյտ գալիս: Ծնունդ, ծնունդ, ծնունդ:

Թափւիր, թափւիր, ձիւնիկ, սկ հողի վրայ: Ծածկիր նրան քո պսպղուն շողակնեայ զգեստներով: Եւ ցերեկը աւելի պայծառ կը թւայ, և գիշերային ժամերը ձիւնի փայլով կը զարդարւեն:

Թոփիր, թոփիր, ձիւնիկ...

Հայրը մի մեծ շալակ տաշեղով ու շինութիւնից վերցրած տախտակներով սենեակը մտաւ: Զիւնը նրան ոտից մինչև գլուխը ծածկել էր, ծածկել էր և շալակի փայտերը:

Նա ուրախ քրքիջով իր բեռը յատակի վրայ ձգեց: Երեխաները շրջապատեցին, կախ եղան վզից, և հօր միրուքից ու բլուզից ձիւնը նրանց դէմքի ու վզի վրայ թափւեց:

Տօներ են, տօներ են, տօներ են:

Վասարանը կարմրեց, փայտը ճրթճրթում է, կրակը վրթվրթում, կարմիր ու գեղին լեզուներ դուրս ցցում:

Մարին սեղանն է պատրաստում: Այսօր նա երկու աւելորդ սպաս է գնում: Ոչինչ, մի կերպ ամենը կը տեղաւորւին: Զէ որ հարկան Բուսսէները հրաւիրւած են:

Հեշտ բան չէր ծերունուն կոտըելը: Որմնաղը կինը խնդրել է նրանց վալ տօնական ճաշին, բայց նրան քաղաքավարի կերպով մերժել էին: Գնացել էր Մարին, նրանց ինչքան համրուրել,—ծերունուն չէր կարողացել համոզել: Նա սովորական տեղը նստած, չընայելով որ տօն օր էր, կօշկի տակ էր պնդացնում:

Այս ժամանակ ինքը կանգրին մէջ ընկաւ: Նա

հարևանների մօտ մտաւ իր կը պաթաթախ բլուզով ու  
վճռականաբար յայտնեց:

—Դէ, հարևանս, եթէ դուք չըգաք, իմացէք, ո՞ր  
մեր բարեկամութիւնը խզւում է:

Նա մեկնեց ձեռը. կօշկակարը տատանւելով նա-  
յեց կնոջը և տւեց իր աղտոտ, սեացած ձեռը:

Այսպիսով կայացաւ համաձայնութիւն:  
Լւացւեցին, հագնւեցին, անցան հարևանների մօտ  
ու նստան սեղանի:

Տօնը սկսւեց:



Բացւած է 1909 թ. բաժանորդագրութիւն

xxvii ԱՂԲԻԿԻ սԱՐԻ xxvii ԵՒ xx ՏԱՐԱՆ սԱՐԻ xx

ՊԱՏԵՐԱԶՄՈՒԹԻ ՀԱՆԴԻՍՈՒԵՐԻ

Պրէմիաներն են՝ 1) Վեհվիթ ԽՄԻՔԵԼԻ, մեծադիր 18  
գոյնով պատկեր, 2) ԳԵՂԱՓՆՁԻԿ, 3) Ա.Ա.Դ.ԶԱՊՈՅ:  
ԱՊԱՌԻԿ ԿԱՄ ՄԱՍ-ՄԱՍ ԳՃԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱՅ. ԲԱԺՄԱՆԻ-  
ԴԱԴՐՈՒԹԻՒՆ ԶԷ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՄ:

Լոյս տեսնող Ն. Հ.-ի քանակին ու ծառալր կախումն ունեն  
վճարող բաժանորդների քանակից:

Աշխատակցում են մեր և եւրոպական անւանի մա-  
տենագիրներ, բանաստեղծներ, գեղագիտներ, արևեստա-  
գէտներ, մանկավարժներ, հրապարակախօսներ, լրազրող-  
ներ. Պատկերների կղիշեները պատրաստում են բացա-  
ռապէս եւրոպայի նշանաւոր գործարաններում. Տպագր-  
ուում են բնույթի թղթի վրայ, իլլուստրատիօնի մրով, նոր  
տառերով և իրանց թանգարքին պրէմիաներով ու յաւել-  
ւածներով հրապարակի վրայ չունեն մրցակից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ԱՂԲԻԿԻ 3 թ. (արտասահման  
5 թ.), ՏԱՐԱՆ 6 թ. (արտասահման 10 թ.), Աղրիշ-Ցարազ  
պրէմիաներով, յաւելւածներով 10 թ. (արտասահման 18 թ.):

Հասցէն՝ Տիֆլիս, Ռեդակյա Ա Ե Յ Ր Ա Կ Կ ամ Տ Ա Ր Ա Յ Ա  
Tiflis (Caucase) Ա Հ Ա Վ Ս Ո Ր Կ ամ Տ Ա Ր Ա Յ Ա.

Խմբագիր-Հրապարակիշ ՏիգրԱն ՆԱԶԱՐԵԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0383344

5583